

ՈՒՂԵՐԶ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԵՎՐԱԽՆՏԵՓՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ»



Նոյեմբերի 14-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին խորհրդարանում, երկրում տեղի ունեցած վերջին իրադարձությունների կապակցությամբ, ելույթ ունեցավ պատգամավորներին և հասարակությանը հղված ուղերձով:

«Ես չեմ եկել խոսելու մեկ կոնկրետ կուսակցության հետ, այլ՝ ամբողջ օրենսդիր մարմնի... Այն փաստը, որ երեք հանգուցային նախարարներ, ովքեր պատասխանատու են Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրացման համար, լքել են կառավարությունը, երկրում և նրա սահմաններից դուրս հարցեր են ծագել, թե ի՞նչ արդյունավետությամբ է իրականացվում այդ քաղաքականությունը... Անհրաժեշտ է այդ քաղաքականության կոնսուլիդացում, անհրաժեշտ են նոր ազդակներ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին և հավելեց. «Եվրոպա մտնելու համար «մենք պետք է եվրոպա դառնանք»:

«ՍԵՏԵՂՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՏՃԱՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՆԱԼ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է»
Պարզաբանելով իր ուղերձի պատճառը՝ Գիորգի Մարգվելաշվիլին նշեց. «Երբ քաղաքական իրավիճակը ստեղծվում է, ապա պետք է կառավարությունում, ու ճգնաժամային երեւոյթները հանգեցրին կառավարող կոալիցիայի երեք նախա- (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՅՑ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԴԱՉԱԽՍՏԱՆԸ ՄԵՐ ԲԱՐԵՎԱՄՆ Է ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐԸ»

Նոյեմբերի 12-13-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ղազախստանում:

Վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում էին փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձե, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար, փոխվարչապետ Գիորգի Վիլիկաշվիլին, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիան:

Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Ղազախստանի նախագահ Նուր-տուլբան Նազարբաևի հետ:

Ղազախստանի նախագահի հետ հանդիպմանը Վրաստանի վարչապետը մեկ անգամ եւս հավաստեց, որ Վրաստանը՝ որպես բարեկամ երկիր և կարեւորագույն գործընկեր, դիտում է Ղազախստանը: Հանդիպմանը անդրադարձան երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓՈՇՎԻԼԻ. «ԸՍՏ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԳԱՆԸ ԲԱՐԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ ԴԵՄՔ ԶԷ, ԵՎ ՆՐԱ ՇԵՏ ԲԱՆԱՎԻՃԵԼՈՒ ԿԱՐԻՔ ԶԿԱ»



Վրաստանի խորհրդարանում նախագահի ելույթի ավարտից հետո, ի նշան բանավեճեր չանցկացնելու վերաբերյալ խորհրդարանական բյուրոյի որոշման բողոքարկման, խորհրդարանի փոքրամասնությունը, հանձնիս ազգային շարժման պատգամավորների, խորհրդարանի նախագահի ելույթի ժամանակ լքեց դահլիճը:

Մեկնաբանելով ընդդիմադիր պատգամավորների վարքը խորհրդարանի խոսակցող հայտարարեց, որ ինքը չի կարող հասկանալ, թե ինչու են պահանջում բանավեճ նախագահի հետ, քանզի «ըստ սահմանադրության, նախագահը քաղաքական պատասխանատու ղեմք չէ»:

Նրա պարզաբանմամբ, խորհրդարանում նախագահի ելույթի ձեւաչափը սահմանել էր բյուրոն, ինչը հաստատվել էր խորհրդարանի կողմից: «Վրաստանի նախագահն ունի խորհրդարանին և հասարակայնությանը դիմելու իրավունք: Գոյություն ունեն դիմելու բազում տարբերակներ, սակայն դիմել չի նշանակում բանավիճել, ուստի, բյուրոն որոշել էր միայն լսել նախագահի ելույթը և ոչ թե անցկացնել բանավեճեր: Նախագահը քաղաքական պատասխանատու ղեմք չէ, եւ չեն հասկանում, թե բանավիճելու ի՞նչ կարիք կա: Երկրում տեղի ունեցած անկման համար նա պատասխանատվություն չի կրում: Պատասխանատու են կառավարությունն ու խորհրդարանը»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

ԱՎԵԼԱՑԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՂԻՑԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆԻՆՈՏԻՆԴԱՅԻՑ ՄԵՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՇԵՆՉԵԼ ՄԿՈՅԱՆԸ ՄԻԱՅԱՎ ՄԵՏԱՍՏԱՆՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի խորհրդարանում ուժերի վերախմբավորման ավարտից հետո պարզվեց, որ «Վրացական երազանք» կառավարող կոալիցիան իր տնօրինության տակ ունի խորհրդարանում ներկայացված 150 մանդատներից 87-ը:

Ներկա դրությամբ, խորհրդարանական մեծամասնությունը պաշտոնապես անդամագրվել է 81 պատգամավոր: Խորհրդարանական մեծամասնությունն ավելացավ եւս վեց պատգամավորով, ի հաշիվ ժամանակին «Ազգային շարժումից» անջատված «Անկախ մեծամասնականների», ինչպես նաեւ «Ազատ ժողովրդավարներից» դուրս եկած պատգամավորների: Ներկայումս խորհրդարանում (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՎԱՆԴԱԿԱՆ

ՆԵՎԵՑ 100 ՀԱՋԱՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇՆԱՍԿԸ

Նոյեմբերի 13-ին Թբիլիսիում, Մետեխի կամրջի վրա, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի մասնակցությամբ, անցկացվեց 100 հազար նահատակների հիշատակին նվիրված միջոցառումը:



Ի հիշատակ 1227 թվականին Թբիլիսիում խորեզմի սուլթան Ջալալ Էդ Դինի հրամանով գլխատված հավատափոխումից հրաժարված 100 հազար թբիլիսցիների, անցկացվեց սգո պատարագ:

Միջոցառմանը ներկա էր Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, ով նշեց, որ հետայսու Մետեխի կամուրջը կրելու է 100 հազար նահատակների անունը:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻՆԻՍՏԵՐ ԳԻՈՐԳԱՉԵՆ ՆԻՆՈՏԻՆԴԱՅՈՒՄ ԲԱՅԵՑ ԿԻՆՈԱՎՈՒՄԲ

Նոյեմբերի 10-ին Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարար Մինիս Գիորգաձեն, Վրաստանի ազգային կինոկենտրոնի ղեկավար Նանա Ջանելիձեի ուղեկցությամբ, այցելեց Նինոծմինդա, որտեղ մասնակցեց մշակութային կենտրոնում նոր կինոակունքի բացման արարողությանը և փոխանցեց անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներ:



«Մեր այցի նպատակը կինոակունքի բացումն էր, եւ այսուհետ տեղի բնակիչները այստեղ կարող են դիտել վրացական և արտասահմանյան ֆիլմեր: Մեզ համար նշանակալից է, որ Վրաստանում նկարահանված ֆիլմերը, առաջին հերթին, դիտեն Վրաստանի քաղաքապետը»:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՅԵԼԵՑ ԴԵՏՐՈՍ ԱՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Նոյեմբերի 11-ին Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարար Մինիս Գիորգաձեն, նախարարության ենթակայության ներքո գտնվող հաստատությունների ներկայացուցիչների հետ հանդիպման շրջանակներում, այցելեց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոն:

Շենքը դիտելուց հետո, նախարարը հանդիպում ունեցավ թատրոնի ղեկավարության հետ: Հանդիպմանը ներկա էր Վրաստանի խորհրդարանի կրթության և գիտության կոմիտեի փոխնախագահ Թբիլիսիի Իսահի շրջանից մեծամասնական պատգամավոր Նուրի Քանթարիան:

Ի պատճառով թատրոնում ստեղծագործական գործընթացը խափանումներով և անցկացվում, թատերախումբը ներկայացումները հիմնականում ցուցադրում է քաղաքի մյուս թատրոններում:

Ներկա դրությամբ, հայկական թատրոնի շենքը վթարային վիճակում է և վերանորոգման կարիք ունի, պետք է ամրացնել շենքի հիմքերը, կարգի բերել դրեմաժային համակարգը, կենտրոնական ջեռուցումը: Վերանորոգման կարիք ունի նաեւ շենքի ծածկը: Վերոնշյալի պատճառով թատրոնում ստեղծագործական գործընթացը խափանումներով և անցկացվում, թատերախումբը ներկայացումները հիմնականում ցուցադրում է քաղաքի մյուս թատրոններում:

Ինչպես նշեց մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարը, նման հիմնախնդիրների կարգավորման նպատակով հիմնվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը կուսումնասիրի և կզննատի նախարարության ենթակայության ներքո գտնվող կազմակերպությունների շինությունները և խնդրի կարգավորման համար կմշակի կոնկրետ ծրագիր:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԿԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԵ ԹԲԻԼԻՍԻ

Նոյեմբերի 8-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի գլխավորած պատվիրակությունը:

Վրաստանի պրոբացիայի և պատիժների կատարման հարցերով նախարար Գիորգի Մղեբրիշվիլին և Հայաստանի արդարադատության նախարար Գիորգի Մղեբրիշվիլին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

վիլին և Հայաստանի արդարադատության նախարար Գիորգի Մղեբրիշվիլին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՂԱՉԱՆՍԱՆԸ ՄԵՐ ԲԱՐԵՎԱՆ Է ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐԸ»


(Ակիգոր՝ 1-ին էջում)

րին, խոսեցին նաև միջազգային և տարածաշրջանային իրադարձություններին առնչվող խնդիրների մասին: Իրակլի Ղարիբաշվիլին Ղազախստանի ղեկավարին շնորհակալություն հայտնեց Վրաստանի տարածքային ամբողջակամությանը և ինքնիշխանությանը աջակցելու համար:

խանութային աջակցելու համար: Այս Վրաստանի և Ղազախստանի վարչապետերի՝ Իրակլի Ղարիբաշվիլու և Քարիմ Մասիմովի մասնակցությամբ անցկացվեց երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված համոզիպումը: Հանդիպման օրակարգում տարբեր ոլորտներում համագործակցության խորացման հեռանկարների հարցն էր: Ընդլայնված կազմով հանդիպմանը կարելի էր արտաքին քաղաքական գերատեսչությունների և օրենսդիր մարմինների միջև համագործակցության ակտիվացումը: Կողմերը նաև քննարկեցին Վրաստանի ներդրումային և տուրիստական ներուժը:

Վրաստանի վարչապետը և կառավարական պատվիրակության անդամները Ղազախստանի կողմից տեղեկատվություն ներկայացրին այն նախագծերի վերաբերյալ, որոնք Վրաստանի իշխանություններն իրականացնում են տեղի և օտարերկրյա ձեռնարկիչներին օգնելու նպատակով:

Վրաստանի վարչապետը և կառավարական պատվիրակության անդամները Ղազախստանի կողմից տեղեկատվություն ներկայացրին այն նախագծերի վերաբերյալ, որոնք Վրաստանի իշխանություններն իրականացնում են տեղի և օտարերկրյա ձեռնարկիչներին օգնելու նպատակով:



ՈՒԿՐԱԻՆԱ ՈՂՂԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուկրաինայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է Գերագույն ռադայի ընտրությունների պաշտոնական արդյունքները: ԿԸԳ-ի տվյալներով, վարչապետ Արսենի Յացենյուկի «Ժողովրդական ճակատ» ստացել է ձայների 22,14 տոկոսը, Պյոտր Պորոշենկոյի դաշինքը՝ 21,81 տոկոսը, Լվովի քաղաքագլուխ Անդրեյ Սադովիի «Ինքնօգնությունը»՝ 10,97 տոկոսը, «Ընդդիմադիր դաշինքը», որը միավորում է նախկին «Ռեզիստանս»-ին՝ 9,43 տոկոսը, Օլեգ Լյաշկոյի «Արմատական կուսակցությունը»՝ 7,44 տոկոսը, Յուլյա Տիմոշենկոյի «Բատկիվչինա»-ն՝ 5,58 տոկոսը:

Այդպիսով, «Ժողովրդական ճակատը», ըստ կուսակցական ցուցակների, ստացել է 64 պատգամավորական մանդատ, Պյոտր Պորոշենկոյի դաշինքը՝ 63, «Ինքնօգնությունը»՝ 62, «Ընդդիմադիր դաշինքը»՝ 27, Արմատական կուսակցությունը՝ 22, «Բատկիվչինա»-ն՝ 17: Ընդամենը համամասնական համակարգով ընտրվել է 225 պատգամավոր: Միամանդատ ընտրատարածքներում քվեարկության արդյունքների հաշվառմամբ, Պյոտր Պորոշենկոյի դաշինքը Գերագույն ռադայում ստանում է 132 տեղ, «Ժողովրդական ճակատը»՝ 50, «Ինքնօգնությունը»՝ 33, «Ընդդիմադիր դաշինքը»՝ 29, Արմատական կուսակցությունը՝ 22, «Բատկիվչինա»-ն՝ 19: Հիշեցնենք, որ 27 ընտրատարածքներում, ներառյալ՝ Դրինը և Դոնեցկի ու Լուգանսկի մարզերի տարածքը, ընտրություններ չեն անցկացվել:

ԱՄՆ

ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

ԱՄՆ-ը կավելացնի Իրաքում ամերիկացի զինվորականների թիվը: ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման որոշել է Իրաք ուղարկել եւս 1500 զինվորական: ԱՄՆ-ը որոշել է Իրաքում ամերիկացի զինվորականների թիվն ավելացնել Իսլամական պետության դեմ պայքարի համար: Իրաքում ամերիկացի զինծառայողների թիվը կհասնի 3000-ի: Նշվում է սակայն, որ ամերիկացի զինվորականներն ահաբեկիչների հետ ռազմական գործողությունների չեն մասնակցելու: Նրանց գործառնությունները կսահմանափակվեն՝ միայն իրաքյան ուժերին ու քրդական կազմավորումներին վարժեցնելով: Ամերիկացիները կտեղակայվեն Բաղդադում և քրդերի կողմից վերահսկվող էրբիլում:

ԿՐԹԱՎԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Նոյեմբերի 10-ին, Վրաստանի կրթության և գիտության նախարար Թամար Սանիկիձեն, փոխնախարար Լիա Գիգաուրիձե, ավելի քան 300 մանկավարժների հետ հանդիպմանը, ներկայացրին ուսուցիչների աշխատավարձի համընթաց քաղաքականության դրույթները:

Ինչպես նշվեց հանդիպմանը, 2015-2016 թվականներին մանկավարժների աշխատավարձը կավելացվի երկու անգամ: Առաջինը տեղի կունենա 2015 թվականի սեպտեմբերին: Այդ ժամանակ ուսուցիչի բազային աշխատավարձը կավելացվի 17 տոկոսով: Պաշտոնավարման երկրորդ աստիճանին գտնվող հավաստագրված ուսուցիչի աշխատավարձը կավելանա 31-34 տոկոսով, իսկ պաշտոնավարման երրորդ և չորրորդ աստիճանին գտնվող մանկավարժների աշխատավարձը կկազմի համապատասխանաբար՝ 760 և 860 լարի:

Աշխատավարձի ավելացման երկրորդ փուլը կսկսվի 2016 թվականի ապրիլից: Այդ ժամանակ բազային աշխատավարձը կավելացվի 34 տոկոսով: Պաշտոնավարման երկրորդ աստիճանի ուսուցիչի աշխատավարձը, լրիվ դասաժամերով ծանրաբեռնվածության դեպքում, միջին հաշվով կավելանա 47 տոկոսով: Պաշտոնավարման երրորդ և չորրորդ աստիճանին գտնվող հավաստագրված ուսուցիչների աշխատավարձը կավելացման երրորդ փուլը: Այդ փուլում պաշտոնավարման երկրորդ աստիճանի ուսուցիչի աշխատավարձը միջին հաշվով կավելացվի 88 տոկոսով, իսկ երրորդ և չորրորդ աստիճանի վրա գտնվող ուսուցիչների աշխատավարձը կկազմի 1050 և 1250 լարի:

Ուսուցիչների միջին աշխատավարձն ընդհանրապես միջին աշխատավարձի մակարդակին կհասցվի 2017 թվականին, երբ այն կկազմի 800-ից 1000 լարի:



ՆՇԱՆԱԿՈՒՄ



ԹԱՄԱՐ ԲԵՐՈՒՇԱՆՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ

Նոյեմբերի 11-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Վրաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարարի պաշտոնակատար Թամար Բերուշաշվիլուն ներկայացրել է որպես գերատեսչության նոր ղեկավարի:

«Ցանկանում եմ տիկին Թամար Բերուշաշվիլուն ներկայացնել արտաքին գործերի նախարարի պաշտոնում... Տիկին Թամարը հստակ գիտի՝ ինչ է հարկավոր անել արտաքին քաղաքականության ոլորտում, ինչ մարտահրավերների առջև է այսօր կանգնած երկիրը, և ինչպես կարելի է արդյունավետորեն շարունակել այն քաղաքականությունը, որը վարում է մեր երկիրը», - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Իր հերթին, Վրաստանի արտաքին գործերի նորանշանակ նախարար Թամար Բերուշաշվիլին խոստացավ չփոխել երկրի արտաքին քաղաքականությունը և շարունակել եվրա-

ինտեգրման ուղին: «Ես ուրախ եմ, որ այժմ հնարավորություն ունեմ ծառայելու երկրի եվրոպական և եվրատլանտյան գերակայություններին: Ես հավատում եմ, որ Վրաստանի ապագան չի կարող լինել առանց Եվրոպայի», - հայտարարեց Թամար Բերուշաշվիլին: Հիշեցնենք, որ ԱԳ նախկին նախարար Մայա Փանջիկիձեն իր ցանկությամբ թողեց զբաղեցրած պաշտոնն այն բանից հետո, երբ երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնից հեռացրեց պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիային:

ՄՇԱԿՈՒՅՑ

ՄԻԽԵԼ ԳԻՐԳԱՉԵՆ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅՈՒՄ ԲԱՅՅՑ ԿԻՆՈԱԿՈՒՄԲ

(Ակիգոր՝ 1-ին էջում)

ցինները: Հենց այդ նպատակով էլ նախարարությունը տարածաշրջաններում իրականացնում է կինոակումբների բացման նախագծեր: Վրաստանի ողջ տարածքի եւս 15 քաղաքներում կինոակումբները կհամալրվեն համապատասխան սարքավորումներով: Բացի այդ, մենք բերել ենք տեղի համայնքների համար երաժշտական ժողովրդական գործիքներ, մշակույթի նախարարության աջակցությամբ հրատարակված գրքեր: Ուստի, համոզված եմ, որ տեղի ունեցածը նշանակալից է բոլորիս համար, և վստահ եմ, որ տեղի բնակիչների համար կինոակումբը կդառնա սիրելի հավաքուցանման տեղը:

վաքատեղի: Ընդհանուր առմամբ, ցանկանում եմ նշել, որ Վրաստանի մշակույթի նախարարությունը հնարավոր ամեն ինչ անում է, որպեսզի տարածաշրջաններում մշակույթային կյանքը լինի առավել ակտիվ», - հայտարարեց Վրաստանի մշակույթի նախարար Միխեյլ Գիրգաձեն: Կինոակումբի բացման արարողությանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիում նախագահի լիազոր Ակակի Մաչուտաձեն, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը և վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը, Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը:

արողությանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիում նախագահի լիազոր Ակակի Մաչուտաձեն, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը և վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը, Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՒՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑ

դատության նախարար Հովհաննես Մանուկյանի հանդիպմանը քննարկվել են երկու երկրների իրավական համակարգերին առնչվող հարցեր: Կողմերն անդրադարձել են պրոբացիայի ինստիտուտի կիրառման վրացական փորձին: Հայաստանի արդարադատության նախարարը, կարելի էր ասել, հանդիպումը, նշել է, որ ծանոթ է պրոբացիոն համակարգում վրացական կողմի իրականացրած աշխատանքների արդյունավետությանը՝ ասելով, որ այդ ուղղությամբ ակնկալում է մանրամասն քննարկում, քանի որ Հայաստանը նոր է պատրաստվում ներդնել պրոբացիոն ծառայության ինստիտուտը:

Աշխատանքային այցի շրջանակներում, կայացավ նաև Վրաստանի գլխավոր դատախազ Գիրգի Բաղաշվիլու և Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի հանդիպումը: Գլխավոր դատախազին փոխանցելով հայաստանյան գործընկերոջ ողջույնը՝ Հովհաննես Մանուկյանը կարելի էր ասել, որ Վրաստանի դատախազը նախարարի ուշադրությունը հրավիրեց երկու երկրների միջև ձեռնարկված աշխատանքային առողջ և արդյունավետ համագործակցությանը՝ շեշտելով, որ բարեկամ երկրների միջև համագործակցության դեմ համատեղ պայքարի հարցում չկան չլուծված խնդիրներ, սակայն իրավական ոլորտում համագործակցության արդյունավետության բարձրացման համար միշտ էլ անհրաժեշտ են պատշաճ ջանքեր գործադրել:

Կողմերը մտքեր փոխանակեցին Վրաստանում և Հայաստանում ընթացող դատաիրավական բարեփոխումների շուրջ: Այցի շրջանակներում, Հայաստանի արդարադատության նախարարը հանդիպում ունեցավ նաև Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հետ: Հանդիպմանը կողմերն անդրադարձան տեղական իշխանությունների հետ Վրաստանի հայ համայնքի համագործակցության խնդիրներին:



Հովհաննես Մանուկյանը Թբիլիսիի քաղաքապետին փոխանցեց Երեւանի քաղաքապետի ողջույնները և հրավերը՝ աշխատանքային այցով այցելել Երեւան:

«ՎՐԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ

«Վրաստանի դատավորների միասնությունը» ընդունեց Հայաստանի պատվիրակությանը: Հանդիպման նպատակը երկու երկրների դատական համակարգերի առջև ծառայած մարտահրավերների քննարկումն էր: «Վրաստանի դատավորների միասնության» վարչության նախագահ Բենիկ Սիսվաձեն և վարչության անդամ Դավիթ Գիբրաձեն հյուրերի հետ գրուցեցին դատական համակարգի կազմակերպչական հարցերի վերաբերյալ, իսկ գործադիր տնօրեն Նազի Ջանեզաշվիլին ներկայացրեց կազմակերպության ընթացիկ գործունեությունն ու առաջիկա ծրագրերը: Իր հերթին, Երեւանի բողոքարկման դատարանի դատավոր Ստեփան Միքայելյանը ծանոթացրեց Հայաստանի դատական համակարգերի առջև ծառայած մարտահրավերներին: Հայ դատավորների պատվիրակությունը այցելեց Թբիլիսիի քաղաքային դատարան, որտեղ հանդիպում ունեցավ դատարանի նախագահ Մանուկյան Ալվալեդիանու հետ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ


ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ՁԵՌՆԱՍՈՒՄ ԵՂԱՎ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Նոյեմբերի 14-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ 2015 թվականի պետք-յուջեի վերամշակված նախագծի քննարկմանը:

Այն խորհրդարանականներին ներկայացրեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոսի: Նախագծի նախա-կան քննարկումների վերաբերյալ զեկու-ցումներով հանդես եկան խորհրդարանա-կան կոմիտեների նախագահները:

Հիշեցնենք, որ, նախագծի վերամշակու-մից հետո, բյուջեն ավելացել է 140 միլիոն լարիով: Բյուջեի եկամտային մասը սահ-մանված է 7 միլիարդ 600 միլիոն լարիով, իսկ ընդհանուր եկամուտները կազմելու են 9 միլիարդ 650 միլիոն:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՀԱՆԳՄԵՆՏԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ երկրի տարածաշրջանների նահանգապետե-րի հետ: Վրաստանի կառավարության գրա-սենյակում անցկացված հանդիպմանը քն-նարկվել են երկրի տարածաշրջանային զար-գացման երկարաժամկետ ծրագրերը:

Վարչապետն ունկնդրեց ներկայացրած ծրագրերի իրականացման ուղղությամբ կա-տարված աշխատանքների մասին նահանգա-պետերի հաշվետվությունը: Հանդիպմանը քն-նարկվեցին նաև երկրում ծավալվող իրա-դարձությունները, եւ նահանգապետերը ներ-կայացան տեղեկատվությանը տարածաշր-ջաններում ստեղծված իրավիճակի մասին:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԵՌՈՒՄՏԱԿԱԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոյեմբերի 11-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունե-ցավ Վրաստանի ազգային հեռուստաընկե-րությունների ղեկավարների հետ: Պետության ղեկավարը հետաքրքրվեց նշանակալից այդ ոլորտում ստեղծված իրավիճակով: Հեռուս-տաընկերությունների ներկայացուցիչները՝ որպես հիմնախնդրային թեմա, ներկայացրին սոցիալական եւ կոմերցիոն գովազդի վերա-բերյալ օրենքները, ինչպես նաև ֆինանսա-կան թափանցիկությունը: Հանդիպման ան-ցավ հարց ու պատասխանի աշխատակար-գով: Կողմերը պայմանավորվեցին, որ, անհ-րաժեշտության դեպքում, առաջիկայում կր-կին կհավաքվեն մեծ ձեռնարկներ:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԻՑ ԶԵՆ ԶՐԿՎԻ

Վրաստանի էներգետիկայի նախարարու-թյունը եւ «Ղազագազտրանս» ընկերությունը հանդես են եկել նախաձեռնությամբ, ըստ որի, բազմազանակ, սոցիալապես կարիքա-վոր ընտանիքները սպառված գազի սակա-զինը չվճարելու դեպքում, չեն գրկվի բնա-կան գազից: Սոցիալական պաշտպանու-թյան գործակալության տվյալներով, միայն Թբիլիսիում ապրում է ավելի քան 2 հազար բազմազանակ, սոցիալապես կարիքավոր ընտանիք: Գազի մատակարարման ընկե-րության հոկտեմբերի 24-ի որոշմամբ, սոցի-ալապես անպաշտպան, բազմազանակ ըն-տանիքները եւ բռնագաղթածների ընտա-նիքները, որտեղ կա չորս եւ ավելի անչա-փահաս երեխա, ծնունդ ժամանակաշրջա-նում սպառված գազի սակազինը չվճարե-լու պատճառով գազամատակարարումից չեն գրկվի: Նրանց հնարավորություն է տր-վում իրականացնել տարկետում եւ ամսա-կան վճարել ընդամենը 10 լարի:

ՄՊԱՎՈՒՄ Ե ԾԽԱԽՈՏԵՂԵՆԻ 5 ՏՈԿՈՍ ԹԱՆԿԱՑՈՒՄ

2015 թվականի հուլիսի 1-ից կառավարու-թյունը ծրագրում է լրացուցիչ հարկ սահմա-նել ծխախոտեղենի վրա եւ ավելացնել այդ ապրանքի աքցիզային հարկը, ինչը, ընդհա-նուր առմամբ, կհանգեցնի սիգարետի գնի 5 տոկոսի աճ:

Աքցիզի բարձրացումը ծխելու դեմ պայ-քարի պետական ծրագրի մի մասն է: Կառա-վարության ներկայացուցիչների խոսքերով, ծխախոտեղենի գնի ավելացումը պայմանա-վորված է ոչ թե եկամուտների ավելացմամբ, այլ բնակչության համար սիգարետի մատչե-լիության սահմանափակմամբ:

Լրացուցիչ հարկադրումը հանդիսանում է նաև Եվրամիության հետ Ասոցիացման հա-մաձայնագրի ստորագրումից հետո Վրաստա-նի ստանձնած պարտավորություններից մե-կը: Ընդ որում, այդ առումով երկրին տրվում է հնգամյա նախապատրաստական փուլ, թե-պետ հարկի տոկոսադրույթը չի մշակում, այն թողել են պետության հայեցողությանը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ



ԲԻԶՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿՊԱՇՏՊԱՆԵՄ, ՔԱՆԻ ԳԵՌ ՆԱ ՕԳՈՒՏ Ե ԲԵՐՈՒՄ ԵՐԿՐԻՆ»

Վրաստանի նախկին վարչապետ Բիծինա Իվա-նիշվիլին, նոյեմբերի 8-ին հանրային հեռուստատե-սությամբ տրված հարցազրույցում, հայտարարեց, որ քաղաքական գործիչներին զգայականությունը չպետք է բնորոշի:

րությունը, անընդհատ աշխատանքի մեջ է, սակայն երիտասարդ է, այդ իսկ պատճա-ռով թույլ է տալիս առանձին սխալներ: «Սա-կայն, դա ժամանակավոր է, ես կուղղվի, սակայն ես ֆավորիտներ չունեմ եւ նրան կպաշտպանեմ, քանի դեռ ես օգուտ կբե-րի երկրին»,- հայտարարեց նախկին վար-չապետը: Նրա խոսքերով, «Ազատ ժողովր-դավարներ»-ի կուսակցության պաշտոնում Իրակլի Ալասանիայի վերընտրությունը սխա-լ է: Ըստ նախկին վարչապետի, Ալասանիան ինքը պետք է հրաժարվեր այդ պաշտոնը զբաղեցնելու հավանականությունից, քա-նի որ դատախազությունում կան նրան ուղղ-

ված հարցեր: Խոսելով իր առաջիկա ծրագ-րերի մասին Բիծինա Իվանիշվիլին նշեց, որ շուտով որպես հաղորդավար, կհայտն-վի հեռուստատեթրում: Նրա խոսքերով, ինքն ամեն շաբաթ երեք փորձագետների հետ վերլուծելու է ընթացիկ իրադարձություն-ները, որպեսզի օգնի հասարակությանը հասկանալու ստեղծված իրավիճակը:

Իվանիշվիլու կարծիքով, այսօր Վրաս-տանի հասարակությունը ճիշտ տեղեկատ-վություն չի ստանում: «Այժմ աննախադեպ իրավիճակ է ստեղծվել: Իշխանությունը չու-նի սեփական հեռուստատեսությունը, ինչը շատ լավ է, սակայն կա «Ռուսթավի 2»-ը, որը «Ազգային շարժման» քարոզչություն է իրա-կանացում, կան նաև մասնավոր հեռուս-տաընկերություններ, որոնք ճիշտ տեղեկատ-վություն չեն մատուցում: Մեզ մոտ բացա-կայում է ճիշտ, որակյալ վերլուծությունը»,- հայտարարեց նախկին վարչապետը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲՈԼՈՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿԱՎԵԼԱՑՎԵՆ 10 ԼԱՐԻՈՎ

2015 թվականին Վրաստանում սոցիալական կատեգորիաներին համապատասխան կենսաթոշակ-ները չեն ավելացվի, իսկ սեպտեմբերի 1-ից բոլոր կատեգորիաների կենսաթոշակները կավելացվեն:

Այդ մասին, խորհրդարանական մեծամասնության հետ Վրաս-տանի վարչապետի հանդիպման ավարտից հետո, հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոսի: Հանդիպ-մանը նա պատգամավորներին ներկայացրեց հաջորդ տարվա պետբյուջեի պարամետրերը:

«Այսօր մենք քննարկեցինք շատ հարցեր, մասնավորապես, վարչապետը խորհրդարանի մեծամասնությանը տեղեկատվու-թյուն փոխանցեց այն մասին, որ 2015 թվականին սոցիալական կատեգորիային համապատասխան, կենսաթոշակները չեն ավե-լացվի, իսկ սեպտեմբերի 1-ից բոլոր կատեգորիաների կենսաթոշ-

ակառուների կենսաթոշակը կավե-լացվի 10 լարիով: Բոլոր կատեգորի-աների կենսաթոշակառուների կեն-սաթոշակի ավելացումը կշարունակ-վի նաև 2016 թվականին»,- հայտարարեց Նոդար Խաղոսին:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչով է պայմանավոր-ված պետբյուջեի պարամետրերի ավելացումը, ֆինանսների նախարարը նշեց, որ դա իրականացվել է հարկերի հաշվին: «Այսինքն, տնտեսական աճը իր արտահայտությունը գտավ բյուջեում»,- նշեց Խաղոսին:



ՄԱՅՐԱՔԱՐԱՔ



ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերի 11-ին Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նար-մանիան ներկայացրեց մայրաքաղաքի 2015 թվականի բյու-ջեի առաջնահերթությունները:

Նրա խոս-քերով, հիմ-նական շեշտը դրվելու է սոցիալական ոլոր-տի, կանաչապատման, մանկապարտեզ-ների վերանորոգման եւ մունիցիպալային ենթակառուցվածքի բարեկարգման վրա: «Առաջինը, առողջապահության եւ սոցի-ալական պաշտպանության ծրագրերն են: Կավելացվի այն նախագծերի ֆինանսա-վորումը, որոնք հասարակությունում լայն պահանջարկ են վայելում: Երկրորդ առաջ-

նահերթությունը մայրաքաղաքի կանաչա-պատմանն է եւ այն նախագծերի իրակա-նացումը, որոնք ունեն այդ ուղղվածությու-նը: Երրորդ առաջնահերթությունը մանկա-պարտեզների շինարարությունն ու վերա-նորոգումն է: Եվ վերջին՝ չորրորդ առաջ-նահերթությունը, մունիցիպալային ենթա-կառուցվածքի բարեկարգումն է»,- հայտա-րարեց քաղաքապետը: Նրա խոսքերով, Թբիլիսիի բյուջեն 2015 թվականին կկազ-մի մոտ 800 միլիոն լարի: «Բյուջեն կլինի

ավելի քան թափանցիկ, մի շարք նախագ-ծեր կներկայացվեն առավել իրատեսա-կան հաշվարկներով»,- հայտարարեց Դա-վիթ Նարմանիան: Նրա խոսքերով, քաղա-քի բյուջեն կազմվել է մայրաքաղաքի բնա-կիչների շրջանում անցկացված հարցման արդյունքում: Դավիթ Նամանիայի խոսքե-րով, հարցման է ենթարկվել շուրջ 8 հա-զար թբիլիսցի:

Հիշեցնենք, որ ավելի շուտ Թբիլիսիի սակրեբուլոն հաստատել էր քաղաքապե-տարանի կողմից մայրաքաղաքի 2014 թվա-կանի բյուջեում կատարված փոփոխու-թյունները եւ այն հաստատել 772 միլիոն լարիի չափով:

ՄԻԱԶՄՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻ ԱՆԱՍՆԻԱՆ ՎԵՐԸՆՏՐՎԵՅ՝ «ԱԶԱՏ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐ»-Ի ՆԱԽԱԳԱՀ

Նոյեմբերի 8-ին, Թբիլիսիի պետական ֆիլիարմոնիայում, անց-կացվեց «Ազատ ժողովրդավարներ» կուսակցության համագու-մարը, որտեղ հաշվետվությամբ ելույթ ունեցավ կուսակցության նախագահ Իրակլի Ալասանիան:

Նա համագումարին 2038 պատվիրակներին ներկայաց-րեց կուսակցության գործունե-ության ծրագրերը՝ «Բացակա երազանք» կոալիցիայից դուրս գալուց հետո: Համագումարում ելույթ ու-

նեցավ նաև Վրաստանի խորհր-դարանի նախագահ, հանրա-պետական կուսակցության ներկայացուցիչ Դավիթ Ուսու-փաշվիլին: Պատվիրակները միաձայն կուսակցության նախագահ

վերընտրեցին Իրակլի Ալա-սանիային:

Հիշեցնենք, որ անցյալ շա-բաթ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին պաշտ-պանության նախարարի պաշ-տոնից ազատեց Իրակլի Ալա-սանիային: Իրենց կուսակցու-թյան ղեկավարի պաշտոնաթո-ղությունից հետո, հրաժարա-կան տվեցին նաև ԱԳ նախա-րար Մայա Փանջիկիձեն եւ Եվ-

րոպական եւ Եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետ-նախարար Ալեքսի Պետրիաշ-վիլին: Ինչ վերաբերում է այդ կուսակցությանն եւս մի անդամ, Վրաստանի արդարադատու-թյան նախարար Թեա Ծոլու-կիանում, ապա նա հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի, ինքը պաշտոնապես դուրս է գա-լիս «Ազատ ժողովրդավարնե-ր»-ի կուսակցությունից:

ՈՒՂԵՐԶ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԵՎՐԱԽՆՏԵՔՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարների պաշտոնաթողության, եւ ստեղծվեց ուժերի նոր ձեւաչափ, բնականաբար, եւ դիմեցի ձեռք: Այն կապառնալու էր, թե որքանով արդյունավետ կլինի՝ որպէս եվրոպական պետություն, որպէս եվրոպայի հատված, Վրաստանի ձեւավորման շարունակությունը, դրանից էլ ներքին, կարծում եմ, որ այսօր, ինչպէս 2012 թվականին, իշխանափոխությունից հետո, անհրաժեշտ է այդ կուրսի շուրջ համախմբում, դրան հաղորդել նոր ազդակ եւ ցուցադրել դրա անշրջելիությունը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին: «Այս քաղաքական գործընթացների պատճառը հանդիսանում է երկրի կառավարման ինստիտուցիոնալ անբավարարությունը: Ես բազմիցս նշել եմ, որ ինստիտուցիոնալ անբավարար անհարգալից վերաբերմունքը հավասարակշռության սկզբունքների անտեսումն ու ուժերի վերաբաշխումը բարդություններ են առաջացնում պետական կառավարման համակարգում: Այդպէս էլ ստացվեց: Անորոշ էր, թե ում են ծառայում ինստիտուցիոնալ սեփական քաղաքական դեկավարոթյա՞նը, թե՞ պետությանը, որքանով էին պաշտպանված պետական գաղտնիքների, անկողմնակալ հետաքննության կամ գերատեսչությունների ապաքաղաքականացման սկզբունքները»,- նշեց նախագահը եւ հավելեց, որ անթույլատրելի է պետական ինստիտուցիոնալ հարաբերությունների տարածումը դեկավարների միջեւ առկա հարաբերությունների վրա: «Որոշումների ընդունման գործընթացը մենք պետք է տեղավորենք օրինական շրջանակում, որոնք նախատեսված են սահմանադրությամբ»,- ընդգծեց նախագահը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԴՆՏԵ Է ԱՍԻ ԻՐ ՎՃԱՌՎԱՆ ԽՈՍՔԸ

Երկրի օրենսդիր մարմինը շատ մեխանիզմներ ունի, որպէսզի դառնա եվրախնայուն արժանատի: Այդ մասին պատգամավորներին ուղղված իր ելույթում հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: «Բոլոր մարտահրավերների կապակցությամբ, խորհրդարանը պետք է ասի իր վճռական խոսքը: Դեռևս դա է իմ ուղեղի հիմնական իմաստը: Խորհրդարանն ունի շատ մեխանիզմներ, որոնց օգտագործմամբ կարող է մի կողմից դառնալ եվրախնայուն քաղաքացիականության, իսկ մյուս կողմից՝ եվրոպական եւ եվրատլանտյան կուրսի կայունության երաշխավորը կառավարության նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգով»,- նշեց նախագահը:

«ԱՆՆԱՐԻՆ Ե ՏԱՌԱՅՆ ԵՐԿՈՒ ՏԵՐԵՐԻ»

«Ակնհայտ է՝ անհնարին է ծառայել երկու տերերի:

Մեզ չի հաջողվի, միաժամանակ խոսելով եվրոպական նպատակների մասին, կառուցել այլ տիպի երկիր»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին: Որպէս ասածի վկայություն նա ներկայացրեց երկրի նորագույն պատմությունից վերցրած փաստը: Նրա խոսքերով, Սաակաշվիլին բարձրաձայնում էր արեւմտամետ դիրքորոշումը, թեպէտ ցանկանում էր կառուցել ոչ ժողովրդավարական երկիր, ինչն էլ հանգեցրեց անկման: Նախագահի հավաստմամբ, նոր իշխանության ժողովրդավարական չափորոշիչը զգալիորեն գերազանցում է նախորդ իշխանության չափորոշիչին: «Սակայն, արեւմտամետ ինստիտուցիոնալ կառավարումը մեր առջեւ ծառայած անեմախրատեսական մարտահրավերն է: Մենք իրատեսորեն պետք է տեսնենք, որ եվրոպական պետության ձեւավորման համար անհրաժեշտ է ուժեղացնել բոլորին»,- ընդգծեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԴԱՏԱՆԱՇՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆ ԵՆՆԱՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆ Է

Գիորգի Մարգվելաշվիլին խորհրդարանին ուղղված իր ելույթում առանձնակի ընդգծեց դատախազության բարեփոխման անհրաժեշտությունը: «Որպէսզի մեկընդմիջտ վերացվի դատախազության քաղաքականացման հետ կապված հարցը, հարկ է որոշել նրա ինստիտուցիոնալ անկախության ապահովման հարցը: Դրա համար հարկ է ձեռնարկել համարձակ քայլեր, այդ թվում՝ կատարել օրենսդրական փոփոխություններ»,- ընդգծեց Վրաստանի նախագահը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՎԱՋԸ ՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐԱՎԵՅ ՈՐԴԵՍ ԲՈՒՎԱԿՈՒՄ

«Մենք բոլորս պետք է համախմբվենք Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման եւ վերականգնման համար պայքարում»,- պատգամավորներին ուղղված իր ելույթում համարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Նրա խոսքով, այդ խնդրի լուծման համար Վրաստանի նախագահի վարչակազմը ջանքերը կրկնապատկել է նաեւ միջազգային ասպարեզում: «Մենք պետք է փոխենք Ռուսաստանի «արտոնյալ շահերի ոլորտի» կոնկրետ պարադիգման»,- ասել է նա: «Անհրաժեշտ է ընդգծել նաեւ, որ մենք պետք է միավորվենք Աբխազիայի տարածքի եւ Ցխինվալիի տարածաշրջանի անբնական (բռնակցում) կանխելու համար: Այդ վտանգը չպետք է բաժանի Վրաստանի հասարակայնությանը, այն պետք է միավորի մեզ, քանի որ միակ էլքը եւ Ռուսաստանի գործողություններին միակ պատասխանը երկրի եվրատլանտյան ինտեգրացումն է»,- նշեց նախագահը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱՎԵԼԱՑԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՂԱՆՑԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻ ԹԻՎԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարանական մեծամասնությունում հաշվվում է 87 պատգամավոր:

Հիշեցնենք, որ մինչեւ կոալիցիայում տեղի ունեցած պառակտումը, «Վրացական երազանքը» իր տնօրինության տակ ուներ 83 մանդատ: Կոալիցիայից ազատ ժողովրդավարների դուրս գալուց հետո, այդ մանդատների թիվը կարող էր նվազել մինչեւ 73-ը, թեպէտ կառավարող կոալիցիայի մեծամասնությունը պահպանելու համար անհրաժեշտ էր 76 մանդատ:

Գիշտ է, դեռեւս անցյալ շաբաթ ազատ ժողովրդավարներից մեծամասնական պատգամավորներ Գեղեւան Փոփխաձեն, Թամազ Ջափարիձեն եւ Գելա Սամխարաուլին հայտարարեցին խորհրդարանական մեծամասնությունում մնալու իրենց մտադրության մասին, սակայն մեծամասնությունն անհրաժեշտ քանակության մանդատ չէր տնօրինում, իսկ մեծամասնության անդամ Շավլա Շավոլիձեն հայտարարեց մեծամասնությունից դուրս գալու եւ ազատ ժողովրդավարներին միանալու մասին:

Վերոնշյալ հանգամանքն էլ որոշիչ հանդիսացավ «Անկախ մեծամասնականների» համար, ովքեր, ինչպէս ասված է խմբակցության ղեկավար Կախաբեր Օքրիաշվիլու հայտարարության մեջ. «Եվս մեկ անգամ հավաստում ենք, որ անկուսակցական, անկախ մեծամասնական պատգամավորներ ենք, միանում ենք խորհրդարանական մեծամասնությանը՝ երկրում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացմանը նպաստող չնախատեսված քաղաքական տատանումներ կանխելու, երկրի առաջընթացի ապահովման նպատակով...»: Ի դեպ, վերոնշյալ դիմումի հեղինակներից մեկը Նինոծմիդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Յենգել Սկոյանն էր:



Այսպիսով, խորհրդարանական մեծամասնությունը, պատգամավորական մանդատների նոր վերաբաշխումից հետո, իր տնօրինության տակ կունենա 87 մանդատ, որից 45-ը բաժինն է ընկնում նախկին վարչապետ Բիծինա Իվանիշվիլու կողմից հիմնած եւ ներկայիս վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու կողմից գլխավորվող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան»-ին, 9 պատգամավորներ միավորված են «Վրացական երազանք-Յանրապետականներ» խմբակցությանը, 6-ական մանդատ իրենց տնօրինություն տակ ունեն «Վրացական երազանք-Պահպանողականներ», «Վրացական երազանք-Արդյունաբերողներ», «Անկախ անկուսակցական մեծամասնականներ» եւ «Անկախ մեծամասնականներ-Չոր տարածաշրջաններ» խմբակցությունները:

Խորհրդարանական փոքրամասնություն կազմող «Ազգային շարժումը» իր տնօրինության տակ ունի 51 մանդատ, որոնք բաշխված են երեք՝ «Միասնական ազգային շարժում», «Ազգային շարժում-մեծամասնականներ» եւ «Ազգային շարժում-տարածաշրջաններ» խմբակցություններում:

Ուժերի ներկա վերաբաշխման սխեմայում, իր տնօրինության տակ եղած ութ մանդատով, խորհրդարանական մեծամասնությունից եւ փոքրամասնությունից դուրս գտնվում է «Ազատ ժողովրդավարներ» խմբակցությունը:

Եվս չորս պատգամավոր մտադիր է գործունեությունը շարունակել անկախ կարգավիճակով:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅԱՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԶԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԳԱՆՁԱՑԻ ՈՒ ՎԱՉԻԱՆՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 9-ին, Վրաստանի երիտասարդության ազգային պալատում, տեղի ունեցավ երկրի երիտասարդ բանահավաքների 17-րդ հավաքը, որը անց է կացվում երկու տարին մեկ համախառնակառուցմամբ: Նշենք, որ, երբ 1970 թվականին առաջին անգամ նմանատիպ միջոցառում կազմակերպվեց «Վրաց լեզվի գանձարանի» կողմից, ընդամենը տասը աշխատանք էր ներկայացվել, իսկ այսօր դրանց թիվը գերազանցում է հարյուրը:

Միջոցառման նախաձեռնողը Վրաստանի երիտասարդության ազգային պալատի՝ Վախթանգ Կոտեխիշվիլու անվան բանահյուսության առանձնաստեղծող Ռեբիլիսի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական լսարանի Շոթա Ռուսթավելու անվան վրաց գրականության պատմության ինստիտուտի բանահյուսության բաժանմունքի աջակցությամբ:

Միջոցառման նպատակն էր աջակցել ժողովրդական բանահյուսության նմուշների ուսումնասիրությանը, որոնցմամբ եւ հետագոյնում հետաքրքրվող երիտասարդությանը՝ նպաստելով նրանց գիտելիքների խորացմանն ու սեփական աշխատանքների ներկայացմանը: Հավաքին իրենց մասնակցությունն էին բերել Վրաստանի տարբեր շրջանների հանրային եւ մասնավոր դպրոցների, գիմնազիաների, կրթական հաստատությունների 6-12-րդ դասարանների սաներ եւ բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողներ: Նրանց թվում էին Նինոծմիդայի մուլտիմեդիալիտետի Գանձա գյուղի Շոթա Ռուսթավելու անվան թիվ 2 եւ Ախալքալաքիի մուլտիմեդիալիտետի Վաչիան գյուղի դպրոցների աշակերտները:

Արդեն 5 տարի է, ինչ Վրաստանի կրթու-

թյան եւ գիտության նախարարության «Վրացերենը՝ որպէս երկրորդ լեզու» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ Մակո Գիլաշվիլի), Նինոծմիդայի Գանձա գյուղում վրացերեն է դասավանդում տիկին Նանա Միխանաշվիլի-Բարջաձեն: Գործի նկատմամբ նրա պատասխանատվության եւ նվիրումի աստիճանը տեսնել ու զգալ է պետք: Բանիմաց մանկավարժն իր մայրենիի նկատմամբ մեծ սիրով է տոգորված, ու այդ սերը կարողանում է փոխանցել սաներին, անկեղծորեն ուրախանալ նրանց ամեն մի առաջընթացի համար: Տարիներ առաջ նրա նախաձեռնությամբ էր, որ առաջին անգամ գանձացի դպրոցականները ժամանեցին Թբիլիսի գլուխ խոնարհելու հայ ու վրաց մեծերի շիրիմներին՝ խոջիվանքի եւ Մթածմիդայի պանթեոններում, ծանոթացան ու բարեկամացան մայրաքաղաքի թիվ 104 դպրոցի հետ: Բազում միջոցառումների հեղինակ ուսուցչուհին ակտիվորեն մասնակից է դարձնում սիրելի սաներին Վրաստանի կրթության ու գիտության նախարարության, տարբեր կազմակերպությունների եւ հաստատությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին: Եվ գոհանում է, որ իր բոլոր բարի ու լավ ձեռնարկների աստարտող դպրոցի տնօ-

րեն Սարգիս Դուրգարյանն է եւ հարգատ կուրելով, ամսասն չեն մնում նաեւ ծնողները:

Այս անգամ սրահներից մեկում աշակերտների ձեռագործ աշխատանքները՝ նկարչության, ասեղնագործության, մանածագործության, կտավագործության, մատողաշաքրոյի նմուշներ: Մեկ այլ սրահում, սեկցիոն միստի ժամանակ աշակերտները ներկայացրին իրենց կողմից հավաքագրած ժողովրդական բանահյուսության օրինակները: Լսարանը համակ ուշադրությամբ ունկնդրեց Ծովիմար Հախվերդյանի «Իմ գյուղի ավանդույթները», Ռուզաննա եւ Ջարուհի Աթորատայանների «Մանկական խաղեր» եւ Արմեն Սիրակյանյանի «Հայկական առածներ եւ հանելուկներ» վրացերենով զեկույցները: Վերջում Հայելապատ դաիլիճում մասնակիցները համոզե եւս երաժշտական համարներով: Գանձացիները ներկայացան Վրաստանի նվիրված խոսքով, վրացական ժողովրդական երգերի շարանով ու «Սա-



յաթ-Նովա» (մեծապարուհի՝ Աննա Գրիգորյան), «Քոչարի» պարերով:

Իրենց զուլալ ձայնով ու անթերի կատարումներով՝ Ռ.Լադիձեի «Թբիլիսո» եւ վրացական ժողովրդական երգերի ելույթով ներկայներին հիացրին նաեւ Վաչիանի (ուսուցչուհի՝ Ռուսուդան Բերիձե) դպրոցականները:

Հաջողված ելույթների համար մասնակիցները պարգևատրվեցին դիպլոմներով ու պատվոգրերով, իսկ ջավախեթցիներն արժանացան նաեւ Պալատի տնօրեն Քեթեւան Փեիքրիշվիլու եւ հանձնաժողովի մյուս անդամների դրվատանքին:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական մյուսերի համակարգող